

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Մահակյան

Մ. Թ. Ու. պատմիչ Մարաբ Մծուրնացու
աշխարհընկալման և աղբյուրաբանական մեթոդի մասին

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդան Լ.Ն. Աբրահամյանի կողմից 6/XII 2013)

Առանցքային բառեր: *Վաղարշ II թագավոր, Մարաբ փրիխտփա Մծուրնացի, եվհեմերիստ, ազգի էպոնիմ, սերնդաբանական ցանկ, բանավոր աղբյուր, Մովսես Խորենացի:*

Մարաբ Մծուրնացու մասին որոշ տեղեկություններ կարող ենք քաղել նրա անունով մեզ հասած խորենացիական և սերիոսյան հաստատվածների իմաստաբանական ու հոգեբանական վերլուծությամբ:

Ամենից առաջ աչքի է զարնում, որ նա իր ազգաբանական խնդիրները դիտարկում է ընդհանուր մարդկային ծագումնաբանության դաշտում, բայց Ս. Գրքից անկախ:

Մովսես Խորենացին¹, նկատելով Մարաբ Մծուրնացու և Ս. Գրքի Յաբեթյան ժառանգների ցանկերի տարբերությունը, իսկույն միջամտում է. «Արդ ի նոյն մատենէ (Մծուրնացու – Ա. Ս.) սկսեալ ասացից. Յապետոսթե², Մերոդ (զ²), Սիրաթ, Թակլադ, որ է Յաբեթ, Գումեր, Թիրաս, Թորգոմ: Յետ որոյ նոյն ժամանակագիր (Մարաբ Մծուրնացին – Ա. Ս.) յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արամանեակ և զայլսն ի կարգի...» (Ի, Թ): Եվ սա միակ դեպքը չէ: Որովհետև, Խորենացու ասելով, Մարաբ Մծուրնացու աղբյուրը Աղեքսանդրի պատվերով քաղդեերենից հունարեն թարգմանված մատյանը, նույնպես Նոյի որդիների անունները Ս. Գրքից տարբեր գիտի. «Որոյ սկիզբն լեալ, ասէ, զԶրուանն

¹Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը» այսուհետ հղվելու է տողամիջում փակագծերում նշված գրքի և գլխի թվահամարներով՝ հռոմեական և հայկական թվանշաններով: Օրինակ (Ի, Թ) [1]:

²«Յապետոս» բառին կցված «թե»-ն հունարենի շաղկապն է, որը Մծուրնացին չի ընկալել և համարել է բառի վերջնամաս, ինչն էլ անցել է Խորենացուն [12]:

և զՏիտանն և զՅապետոսթե...» (I, Թ): Բայց կա նաև երրորդ տարբերությունը Ս. Գրքի հետ: Մծուրնացին ոչ քրիստոնեական աղբյուրից գիտի Բելին, որ Տիտանի սերնդից է:

Այս երեք տարբերությունները հաշտեցնողը, սակայն, Խորենացին է, և ոչ թե Մծուրնացին, ինչը նշանակում է, որ վերջինս ձեռքի տակ չունի Աստվածաշունչ մատյանը:

Մրան համադրենք ևս մի դիտարկում:

Մծուրնացու բուն մատյանը՝ հայոց նախնյաց պատմությունը, ըստ Խորենացու բառացի մեջբերման, սկսվում է այսպես. «Ահեղք և երևելիք՝ առաջինքն ի դից և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութեան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք...» (I, Թ): Այստեղ միանշանակ պարզ է դառնում, որ հեղինակը ոչ միայն քրիստոնյա չէ, այլև կանոնավոր հեթանոս էլ չէ, որովհետև բոլոր աստվածներին համամարդկային ընդհանուր ընկալմամբ է ներկայացնում՝ ելնելով այն տրամաբանությունից, որ այն ժամանակ դեռ ազգեր և լեզուներ չկային: Իսկ երբ ամբարտավան մարդիկ հղացան աշտարակաշինության խորհուրդը, «հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մեջ արկանէին: Յորոց մի էր և Յապետոսթեան Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովաձիգ և հաստաղեղն» (I, Թ): Նախ, քրիստոնյան աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ չի կարող համարել աստվածներին և չի ընդունի, որ աշտարակը փլվել է նրանց ցասումից առաջ եկած հողմից, որովհետև, ըստ քրիստոնյաների, աշխարհի և մարդկության սկիզբը դրել է միակ Արարիչ Աստված: Երկրորդ, ընդհանուր մարդկային նախնու և համամարդկային աստվածների գաղափարը դեմ է կոնկրետ հեթանոսական կրոնական ուսմունքին և հատուկ է նոր տիպի փիլիսոփա ուսյալներին, ում համար ընդհանուր նախնու և ազգերի բաժանման գաղափարները համամարդկային գիտանքներ են, նոր, իսկական գիտելիքներ: Սակայն, պետք է ասել, որ այս ո՛չ քրիստոնյա և ո՛չ հեթանոս հեղինակը ապակրոնական անհատ չէ, նա համամարդկային գաղափարներով համակված, քաղղեական ուսմունքները հարգող, հունասեր ուսյալ է, ով աստվածապաշտությանը և կրոնին վերաբերում է այնպես, ինչպես, մոտավորապես, կոսմոպոլիտ հրեաները, երբեմն գնոստիկները, կամ էլ, այսպես կոչված, «գլոբալիստ» արարչապաշտները: Բայց որպես փիլիսոփա՝ Մծուրնացին, իրոք, իր ժամանակի եվհեմերականներից է: Դա երևում է թեկուզ նրանից, երբ ասում է, թե հին աստվածներից հսկաների ցեղ սերվեց, որ փորձեց կառուցել ամբարտակ:

Հայտնի է, որ եվհեմերականները, որպես մ.թ.ա. IV դ. փիլիսոփա Եվհեմերոս Մեսսենացու հետևորդներ, խոր անցյալում ապրող մարդկանց հետագա մանր մարդկանցից տարբերում էին իրենց վիթխարի չափերով, ֆիզիկական տվյալներով, ձայնով, ոգով, բնույթով և այլն: Դրա համար էլ աստվածացան, երբ փոխվեցին ժամանակները, այսինքն, երբ առասպելական, նախապատմական կամ էպիկական ժամանակին հաջորդեց պատմական, սոցիալական, կենցաղային ժամանակը նրանք աստվածացան: Վերջինս ակնհայտ զուգորդվում է «Մասնա ծոեր» էպոսի հերոսների էպիկական ժամանակին փոխարինող ետհերոսական, ետմիերյան ժամանակի հետ, այն է՝ պատմական, ժամանակի հետ, երբ մարդիկ, դառնալով իրենց սովորական այժմյան չափերին, մանրացել են ֆիզիկապես ու հոգեպես, երբ այլևս ցորենը մասուրի չափ չէ, մասուրը ընկույզի, իսկ հողն էլ թուլացած՝ չի կարող կրել հերոսին:

Մարաբ Մծուրնացին, կարելի է կարծել, իր մասին որոշ տեղեկություններ է հաղորդում նաև Հայկի և Բելի պատերազմին հաջորդող հատվածում, երբ բնակեցվում ու անուններով են օժտվում Հայկական լեռնաշխարհի վայրերը:

Հայկի անունով երկիրը՝ Հայք, Բելի ընկած վայրը՝ Գերեզմանակք, Հայկի շինած գյուղը՝ Հայկաշեն, հայրերի ապրած տեղը՝ Հարք անվանելուց մինչև Հայկի ժառանգորդների անուններով գավառների անվանակոչումը և տեղական էպոնիմների շարքի ստեղծումը (Շարա – Շիրակ, Ցուլակ – Ցուլակերտ և այլն) գրի առնելու և դրանց հիման վրա յուրահատուկ ազգագրական պատմություն հյուսելու համար առնվազն հարկավոր է եթե ոչ ազգությամբ հայ, ապա գոնե հայախոս լինել: Այլապես օտար գիտունի համար, եթե նա չիմանար կամ վատ իմանար հայերեն, գոնե պետք է աշխատեր հայ բանահավաք՝ այդ հսկա նյութը հավաքելու և ի մի բերելու: Ասվածից պարզ հետևում է, որ Հայոց նախնական պատմության հեղինակը հայ է, որ գրել է հունարեն, իսկ ըստ Խորենացու՝ նաև ասորերեն: Արդեն ասվեց, որ Խորենացին, փոխելով Մարաբ Մծուրնացու անունը (Մար Աբա), ազգությունը (ասորի), լեզուն (նաև ասորերեն), քաղաքը (Մծբին), գործուղման վայրը (Նինվե), նպատակը (պետական դիվանից օգտվելը), փորձել է պատմություն կերտել մ. թ. ա. III-II դդ. Հայաստանի, նրա թագավոր Վաղարշակի ու նրա հաջորդի մասին: Այդ հողվածում արժարժվել է նաև այն հարցը, թե ինչու Հայոց առաջին Արշակունի թագավորը կոչվեց Վաղարշակ, ի տարբերություն երկու այլ վկայությամբ [3, 4] մեզ հասած Արշակ և, իրական պատմության մեջ մնացած, Տրդատ անունների: Ավելացնենք, որ ասորական թեման Խորենացու ներդրումն է, չէ՞ որ մ. թ. ա. III դ., երբ Հայքում իբր իշխում էին Արշակունիները, դեռ ասորական գիրը գոյություն չուներ:

Մնում է միայն բացահայտել Վաղարշ II և Մարաբ Մծուրնացու կապը:

Բանն այն է, որ Մարաբ Մծուրնացու գործը, ինչպես նշել է Խորենացին, մեծ ջանք էր պահանջում և առանց հովանավոր-պատվիրատուի գլուխ չէր գա: Արդեն ասվեց, որ ազգաբանական թեմաները ավելի հետաքրքրում էին աշխարհիկ վերնախավին: Մանավանդ որ իմաստասեր կայսր Մարկուս Ավրելիոսի շուրջ քսանամյա իշխանության (161-180) ընթացքում իմաստասեր ուսյալների և համամարդկային գիտանքների վարկանիշն աճելով տարածվել էր կայսրության սահմաններից դուրս՝ ձևավորելով մի տեսակ բարձրաշխարհիկ ճաշակ ու հոգևոր պիտույքների պահանջարկ նաև հարևան արքունիքներում ու իշխանական վերնախավերում: Իզուր չէ, որ նոր գիտանքներին վերաբերող գրքերը հաճախ գտնվում էին արքունական արխիվներում, ինչը կարող է նշանակել, որ դրանք նաև հաճախ պատվիրվում էին արքունիքից կամ իշխանական տներից: Պարզ է, որ նման պատվերը տրվում է նախապես հայտնի ուսյալ փիլիսոփայի, դպրատան ծառայողի, արքունական քարտուղարի կամ պարզապես հմուտ գրագետի: Խորենացին ու Սեբիոսը Մարաբ փիլիսոփային կապում են արքունիքի հետ. առաջինը՝ ուղղակի Վաղարշակի միջոցով, երկրորդը՝ Սանատրուկի, բայց շատ անուղղակի ձևով: Իբր թե Սանատրուկի ապարանքի ավերակներից բացվում է Տրդատի օրոք Ագաթանգեղոսի թողած արձանագրությունը մի սյան վրա, որից էլ քաղազրել են Մարաբ Մծուրնացու աշակերտները ուսուցչի մատյանում, որտեղ էլ Սեբիոսը Միջագետքում եղած ժամանակ կարդացել է պարթև և հայ Արշակունիների գահացանկերը: Կեղծարարն անգամ չի նկատել, որ Տրդատն ու Ագաթանգեղոսը չէին կարող արքունի դիվանից քաղել և արձանագրել նման բան, որովհետև նրանց արքունիքը ոչ թե Մծբնում (Մծուրնում), այլ Արտաշատում էր: Այս և արդեն նշված մյուս պատճառներով Սեբիոսի նախաբանի Խոստաբանության տվյալները պետք է համարել հորինածին [4]:

Խորենացին էլ է հորինում իր աղբյուրի ստեղծման պատմությունը, բայց նրա մոտ մի բան հավաստի է, որ պատվիրատուն Մծբնի (կարդա՝ Մծուրքի) արքունիքն է Վաղարշակի օրոք: Իսկ միակ արքան, որ կարող էր լինել Վաղարշակ անվան թելադրողը, գահի ժառանգական իրավունքի սկզբնավորող և Մծուրքում նստավայր ունեցող Վաղարշ Բ Արշակունին է: Եվ հենց նա կարող էր արքունիքում պատվիրել «Հայոց պատմություն» Մարաբ Մծուրնացի փիլիսոփային, ինչն էլ հիմք է տվել Խորենացուն նրան Վաղարշակի անունից գործուղել պարթևների թագավորի մոտ՝ Նինվե: Իրականում, ինչպես պարզվեց, «Հայոց նախնական պատմության» նյութը խիստ հայկական է ու հասու է միայն հայախոս իմաստասերին: Այն չէր կարող թարգմանված լինել քաղդե-

ական մատյաններից հունարեն՝ Ալեքսանդր Մեծի հրամանով: Նրա իսկական աղբյուրը Արամի մասին եղած պատմությունների առիթով հայտնում է Խորենացին՝ առանց վարանելու, որ կարող է ինքն իրեն հակասել, և մեջբերում է Մարաբ Մծուրնացու խոսքը. «Բայց թեպետ և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպէս Մար Աբաս Կատինայ (կարդա Մարաբ փիլիսոփա – Ա. Ս.) պատմէ՝ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց» (I, ԺԴ): Ահա՛ Մծուրնացու իսկական աղբյուրը: Ահա՛ ինչպես է նա բացատրում, թե ինչու են քաղդեական մատյաններում բացակայում Արամի այդքան հերոսական գործերի հիշատակագրումները. «Ասէ և այլ իմն պատճառս նոյն այր, թէ, որպէս ուսայ՝ հպարտ եւ անձնասէր գոլով Նինոս... հրամայէ զբազում մատեանս և զգրոյցս առաջնոցն, տեղեաց տեղեաց և ուրուք ուրուք գործոց քաջութեան այրել... և որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել» (I, ԺԴ):

Ակնհայտ է, որ Մարաբ Մծուրնացին, Արամի միջազգային դերը ընդգծելով, իր պարտքն է համարում պատճառաբանել, թե ինչու այդքան մեծ գործերի հեղինակին, որի անունով հույները հայերին կոչում են Արմեն, իսկ պարսիկները և ասորիները՝ Արմենիկ, օտարները չեն ճանաչում: Այստեղ հարմար առիթ է դարձյալ ի բարին հիշելու Ստ. Մալխասայանցին՝ ժխտելու վերոհիշյալ մեջբերմամբ (էջ 10) արտահայտված նրա այն դրույթը, ըստ որի՝ Արամի գործերի համար Խորենացին ուներ այլ աղբյուրներ [5]:

Խորենացու մոտ գտնում ենք ևս մի նուրբ վկայություն, որից երևում է, որ Մարաբ Մծուրնացին Հայկի 7 Բելի պատմությունը նմանապես քաղել է բանավոր ավանդույթից. «Իսկ Նինոս թագաւորեալ ի Նինուէ՛ յիշատակ քինու գնախնւոյն իւրոյ Բելայ ունէր ի մտի, ի գրուցաց ուսեալ և զայս խորհէր հատուցանել յամս ձիգս... բառնայ, ջնջել զամենայն ճետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ» (I, ԺԳ): Իբր Նինոսը, զրույցներից լսած լինելով և մտքում պահելով Բելի պատմությունը, քինախնդիր է լինում իր նախնու համար: Այս նուրբ վկայությունն, իրոք, հոգեբանական նշանակություն ունի՝ հասկանալու, որ Մարաբ Մծուրնացու գրված խավոր աղբյուրը բանավոր է, եթե ոչ անմիջականորեն իր կողմից գրառված, ապա գոնե արքունի դիվանում պահվող գրառումներից քաղված, կամ էլ ն՛ այն, և՛ այն:

Այսինքն, ինչպես Արամի, այնպես էլ Հայկի և Արայի մասին պատմությունները պարտավոր չէին գրանցել Նինվեի մատենագիրները:

Եվ ինչպես Արամի, այնպես էլ Հայկի ու Արայի պատմությունների աղբյուրը հայկական բանավոր ավանդույթն է: Ըստ Խորենացու՝ Մարաբ Մծուրնացին «Ազգերի պատմությունների» մայր մատյանից քաղում է միայն հարկավորը, ինքը՝ Խորենացին, Մարաբից քաղում է միայն նահապետների մասին տվյալները. «Եւ այս կարգ գրուցաբանու-

թեան դադարումն առցէ, զի հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս» (I, Թ): Կամ. «Բագում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին (Մարաբի – Ա. Ս.), այլ մէք, որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է, շարեացուք» (I, ԺԲ): Փաստորեն Խորենացին բացարձակ ճիշտ է ասում իր մասին, թէ ինչպէս է ինքն ընտրողաբար նյութ քաղել Մարաբ Մծուրնացու գրքից: Բայց ահա, թէ Մարաբն ինչքանով է ընտրողաբար օգտվել չեղած Նինվեի չեղած մատյանից, ճիշտ կարելի է համարել հարաբերական իմաստով: Որովհետև, ինչպէս տեսանք Աբյուդենուսի օրինակով, օտար ազգաբանական գրքերում կարող էին գտնվել, ի շարս այլ ազգերի, նաև հայոց նախնիների ցանկը՝ Հաբեթից մինչև Արամն (Հայկ) կամ Արամ, այսինքն՝ մինչև հայոց երկու էպոնիմներ: Սակայն այդ ցանկերում նշված նահապետների գործերի կամ նրանց ժառանգների մասին եղած պնդումներ անհնար էր գտնել օտար գրքերում, դրանք լիարժեք ապրում էին հայ ժողովրդական բանահյուսության մեջ կամ էլ մասամբ պահպանվում էին հայոց դիվանական գրառումներում: Ուրեմն պատմահայրը ճիշտ է այնքանով, որ օտար գրքերից կարելի էր քաղել հայոց նախնահապետների անվանացանկը, բայց ճիշտ չէ, թէ այդ գրքերում գրված են նաև հայ նահապետների անունները ու սխրանքները [6]: Այստեղ պետք է ասել, որ պատմահայրը հենց ինքն է իրեն հերքում՝ ասելով, որ «մանաւանդ զի և ոչ պարծանք ինչ՝ նոցա, և ոչ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան» (I, ԺԴ): Արդյոք Մարաբ Մծուրնացին ևս ունեցէ՞լ է Խորենացու նման ինչ-որ գրավոր աղբյուր վկայակոչելու մղում, պարզ չէ, բայց երևի՝ այո, որովհետև Խորենացու աղբյուրաբանական նշումները երբեմն կարող էին ծագել հենց Մարաբից: Օրինակ, Մարաբի մատյանից Պարոյրի մասին քաղագրելուց հետո Խորենացին ավելացնում է, պարզ չէ, ի՞ր, թէ՞ հենց Մարաբի խոսքը. «Ապա եթէ ասիցես (պատվիրատուն՝ ո՞ւմ – Ա. Ս.), ուստի՞ մեզ և զնախնեացն մերոյ զիտել զանուանսն այսպէս, իսկ զբազմաց՝ և զգործս, ասեմ՝ ի հնոցն դիւանաց Քաղդեացոց, Ասորեստանեայց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբրև գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց» (I, ԻԱ): Ոմանց կարող է թվալ, թէ այս խոսքը միանշանակ Խորենացուն է պատկանում: Բայց եթէ Խորենացին Մարաբ փիլիսոփային գործուղում է Վաղարշակի անունից Նինվեի արքունական դիվան, արդեն ավելորդ են դառնում այդ խոսքում հնչող թէ՛ հարցը, թէ՛ պատասխանը: Դրա համար էլ այդ խոսքն առավել պատշաճ է գալիս իրական Մարաբին, որն օգտվում է միայն հայոց դիվանից, իսկ իր հարուցած հարցին տալիս է զուտ տրամաբանական պատասխան առ այն, որ նախնեաց անուններն ու գործերն այդքան էլ անհետ չեն կորել, չնչին չափով ինչ-որ տեղ արձանագրվել

են: Միայն թե արձանագրվել են ոչ թե Նինվեում, այլ մի շարք դիվաններում: Սա է, որ համարվում է ժամանակի ուսյալ մարդու հայացք: Այդ մարդկանց միավորում է ոչ միայն իմաստասիրական մեթոդաբանությունը, այլև տերմինաբանությունը, արտահայտվելու ոճը, գուցե և իրար դիմելու և մեծարելու ձևը (օր. Ով ծեր, իմաստուն և այլն): Այնուամենայնիվ, գրավոր աղբյուր գերադասելը և որևէ տեղեկատվություն, թեկուզ չնչին մասով, գրավոր աղբյուրներին առնչելը հելլենիզմի դարաշրջանի ուսյալների ընդհանուր հատկանիշ կարելի է համարել, որով և նրանք ձգտում էին ավելի հավաստի գիտելիքներ հաղորդել սահմանազատվելով սովորական քրմական կամայական տեղեկատվությունից ու մեկնաբանություններից: Մարաբ փիլիսոփա Մծուրնացին ևս այդ ուսյալներից էր, որ դարձավ մեզ հայտնի առաջին հայ պատմագիրը [7]:

Մատենադարան

Ա. Ա. Սահակյան

Մ.թ. II դ. պատմիչ Մարաբ Մծուրնացու աշխարհընկալման և աղբյուրաբանական մեթոդի մասին

Մովսես Խորենացին, քաղաքրելով Մարաբ Մծուրնացու՝ հեթանոս հելլենասեր, Եվհեմերի հայացքների հետևորդի «Պատմությունից», նրան վերագրել է օտար գրավոր աղբյուրներ: Պարզվում է, որ գոնե հայոց ազգածին նահապետների մասով (Հայկ, Արամ ևն) Մարաբ Մծուրնացու աղբյուրը հայ բանահյուսությունն է: Ուստի Մարաբը եղել է ոչ միայն հայ առաջին պատմիչը, այլև՝ առաջին բանահավաքը:

А. А. Саакян

О мировосприятии и источниковедческом методе историографа II в. н. э. Мараба Мцурнаци

Мовсес Хоренаци, используя в качестве источника «Историю» Мараба Мцурнаци, язычника-эллинофила, последователя философских взглядов Эвгемера Мессенского, приписывал ему пользование иноязычными письменными источниками. Однако, как выявлено в статье, единственным источником для составления списка армянских родоначальников-патриархов (Гайк, Арам и пр.) был армянский фольклор. Таким образом, Мараб становится не только первым армянским историографом, но и первым собирателем устного творчества.

A. A. Sahakyan

**On the World-Perception and Source Study Method
of the Historiographer Marab Mtsurnatsi (2nd century AD)**

Movses Khorenatsi, who has used the pagan philhellene Euhemerist Marab Mtsurnatsi's "History" as a source, ascribed to him using of the foreign written sources. However, as it is revealed in the article, the only source for composing the list of Armenian ancestor patriarchs (Hayk, Aram, etc) the Armenian folklore was. Hence Marab was not only the first Armenian historiographer but also the first collector of Armenian folklore.

Գրականություն

1. Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց (գննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի), Երևան, 1981:
2. *Տեր-Մկրտչյան Գ.*, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 85:
3. *Прокопий Кесарийский. О постройках. Книга 3, I, 4-7.* http://myriobiblion.byzantion.ru/prokopij/p_aed3.htm. Տե՛ս նաև Պրոկոպիոս Կեսարացի (թարգմանություն բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1967: «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5. Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա»:
4. Պատմութիւն Սեբեոսի (աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի), Երևան, 1979:
5. *Մալխասյանց Ստ.*, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, էջ 260:
6. *Թովկյան Ա.*, Մովսես Խորենացու հունական աղբյուրների շուրջ, Երևան, 2001, էջ 59-60:
7. *Սահակյան Ա.* – ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, 2011, հատոր 111, No 2: